զՊոյարս Նորա, և առաքէ երկիցս անգամ պահանջել զասացեալ դրամն։ Եւ Ճիւանն ևս զգնացեալ զափուճիպաշին սպանանէ, և Ղատիրն կալեալ զարս և զռայս Ուլահին՝ կոտորէ. և առաքեաց պատգամ առ վէզիրն զայս ինչ, որ նստէր ի Պուրսայ, թէ Ապստամբեցաւ Ճիւանն։ Բայց զայս նախ գրեաց զանկատ ի Ղատիրէն Ճիւանն և առաքեալ ի վէզիրն։ Եւ Ղատիրն կապեաց զբերան ճանապարհացն և զՋրոյն Թունայի, որ ոչ եկն, զի հուպ նստէր սահմանացն. վասն որոյ զայրացեալ Ճիւանին՝ պատրաստի զօրօք և վաղվաղակի վառեալ մտանէ ի հողս Տաճկաց, միանգամայն ցթուր եղեալ ի գաւառս և ի գիւղս, և ի ճանապարհ զՀայս և զՅոյնս, զՏաճիկս և զվաճառականս ամենայն ազանց զորս և գտանէր։ Եւ աւերեաց զԻպրայէլ եւ զՄաչին, զՍօղանլին եւ զայլս այրեաց եւ զբերդս քակեաց, որ յեղերս Ջրոյն այնմ և բազումս գերի վարեաց։ Եւ Ղատիրն ընդ այլ փաշայիցն երկուցեալ, բայց այլք ի նոցունց պատրաստին զհետ Նորա մտանել. սակաւ անկանէր ի նմանէ և փախեալ Ճիւանն մտանէր ի Մաճար։ Եւ ասացին թէ գրով յերկիրն իւր յորժամ եմուտ՝ ԺԴՌ ոգի տաճիկ սպան, և զորս աստի տարեալ էր չաւուշ և զափուճի և տէլի՝ զամենեսեան սպանեալ եւ ՌԴՃ արս մկրտեալ եւ ԽԱ աւուրքք պատարագս արարեալ հաղորդել տայ ի վանք մի. և ի կատարումն քառասնից ասէ թէ Դառնա՞յք ի քրիստոնէութենէ, և նոքա ասեն՝ Ո՛չ. և՝ թէ յերկիրս ձեր երթայք եւ անդ դառնա՞յք, եւ նոքա գլուխ ի բաց աղաղակեն թէ Ո՛չ։ Եւ պատրաստէ զդահիճս Բ զի կանգնին ի դրունս վանիցն, եւ տայ ի ձեռս արանցն Բ Բ ոսկի եւ ասէ. Գիտեմ զի օձ տաճիկ էք, այժմ լերո՛ւք նահատակ մինչդեռ սուրբ քրիստոնեայ էք. եւ անդէն զնոսա սպանանէ։ Այսքան աւերութիւն արար ի հպարտութենէ սրտին, և թէ գո՞յր պատ-